Yerevan, Republic of Armenia
2 Arshakuniats, 15 floor
tel. 568 968, 586 529 fax 528 752
news@aravot.am
www.aravot.am

օրաթերթ
հրատարակվում է 1994 թ.
գինը՝ 150 դրամ

Արարատ
aravot daily

49/4145/ 17 մարտի 2012 շաբաթ

ISSN 1829-2224

Կայացած մարդկանց դասականքը

Ինչպես եւ սպասվում էր, «Ազատ դեմոկրատներն» առաջիկա խորհրդարանական ընտրությունների է գնալու «Ժառանգության» հետ դաշինքով: Դա ողջունելի է երկու տեսակետից: Նախ՝ որքան քիչ լինեն ընտրություններին մասնակցող կուսակցությունները, այնքան լավ. կուսակցությունների առատությունն ավելորդ ինֆորմացիոն աղմուկ է ստեղծում: Երկրորդ՝ քաղաքական ուժերը, որոնք շեշտում են գաղափարական ընդհանրությունները, գերադասելի են այն ուժերից, որոնք միավորվում են անհասկանալի եւ անիրագործելի դրդապատճառներով:

«Ազատ դեմոկրատների» եւ «Ժառանգության» գաղափարախոսությունն ազատականությունն է, որը, անկեղծ լինենք, թե քաղաքական, թե տնտեսական եւ կենցաղային մակարդակներում Հայաստանում ամենամեծ ժողովրդականությունը վայելող հոսանքը չէ: Բայց մեր երկրում պոպուլյար չէ նաեւ դասական երաժշտությունը, արդյոք դա նշանակո՞ւմ է, որ այն վատն է: Տնտեսական ոլորտում ազատականության բացասական ընկալման պատճառը մասամբ այն է, որ անցած 20 տարիների ընթացքում բազմաթիվ դառը խոսքեր են ասվել «վայրի լիբերալիզմի», «թալանսեփականաշնորհման» եւ նման այլ բաների մասին: Իմ հասակակիցների մեծ մասը այժմ էլ վստահ է, որ եթե, ասենք, գործարանները մնային պետական, դրանք այսօր կշարունակեին մրցունակ արտադրանք տալ, եւ այնտեղ հիմա կաշխատեին հազարավոր մարդիկ: Մինչեւ 98 թվականը այդպես էր ասում ընդդիմությունը՝ մարդկանց, հիմնականում՝ լյումպենացված զանգվածի սիրտը շահելու համար, իսկ 98-ից հետո՝ նաեւ իշխանությունը՝ նույն նպատակով եւ «նախկիններին» փնովելու համար: Հատկանշական է, որ այսօր նախկին լիբերալների մեծ մասն իր ճառերում խուսափում է այդ բառից, քանի որ հիմա նրանք ընդդիմադիր են եւ չեն ուզում ընտրազանգվածի մոտ տհաճ հիշողություններ արթնացնել:

Բայց իրավիճակը ամբողջությամբ պայմանավորել միայն քաղաքական ուժերի «հակաազատական» քարոզչությամբ՝ սխալ կլինի: Որովհետեւ մեր հասարակության մեջ լիբերալ մտածելակերպով մարդիկ ընդհանրապես փոքրամասնություն են կազմում: Իսկ քաղաքական ուժերը, բնականաբար, մեր հասարակության անբաժանելի մասն են: Հատկապես այս՝ նախընտրական շրջանում մեր հիմնական կուսակցությունների գերիշխող «գաղափարախոսությունը» (եթե այդպես կարելի է ասել) պարանոյան է, երբ ամեն մի բառի տակ նրանք փնտրում են համաշխարհային դավադրություն եւ մութ ուժերի պատվեր ու բացի քաղցրահամ գովաբանություններից՝ ընդհանրապես պատրաստ չեն որեւէ բան լսել: Հետաքրքիր է, որ այդ ֆոնի վրա նախկինում՝ 90-ականներին, ծայրահեղ ագրեսիվ («մարդ սպաննա՞ծ ես») Դաշնակցությունն այսօր բավականին լայնախոհ է երեւում:

«Ազատ դեմոկրատները» եւ «Ժառանգությունը» ուղղակիորեն հայտարարում են իրենց ազատականության մասին, որը, կրկնեմ, այսօրվա Հայաստանում փոքրամասնության գաղափարախոսություն է: Ինչո՞ւ: Հիմնական պատճառն այն է, որ ազատական (բոլոր իմաստներով) կարող են լինել կայացած մարդիկ: Իսկ այդպիսի մարդիկ մեր երկրում առայժմ շատ չեն:

ԱՐԱՄ ԱԲՐԱՀԱՄՅԱՆ

«Մակեյանը շարունակում է զառանցել»

Անդրադառնալով մեր թերթի երեկվա համարում տեղ գտած հրապարակմանը՝ Ազգային ժողովի պատգամավոր, ՕԵԿ-ական Հովհաննես Մարգարյանը նշեց, որ ՕԵԿ-ը մայիսի 6-եր շատ է տեսել եւ մշտապես դրանցից դուրս է եկել հաղթանակած: «Զառանցանքն ու հերյուրանքների տարածումը Մակեյան տեսակի գործիչների սիրած գործելաոճն է, մարդ, որի՝ ժամանակին կատարած սեւ գործերի մասին մարզում գիտեն շատերը, եւ որի ստեղծած կուսակցությունը որեւիցե ընտրության որեւիցե ցուցանիշ չի գրանցել: Նման տեսակի գործիչների բարոյական նկարագրին բնորոշ է այլոց սեւացնելը, այլ ոչ թե իրենց հաջողություններին ձգտելը, ինչն ընդամենը խղճահարություն է առաջացնում: Ինչ վերաբերում է Արթիկում եւ առհասարակ Շիրակի մարզում ՕԵԿ-ի ներուժին, ապա տեղեկատվության համար պետք է հայտնեմ, որ կուսակցությունը մշտապես հաղթել է Շիրակում եւ կհաղթի նաեւ մայիսի 6-ին: Իսկ Շիրակի մարզպետի եւ Արթուր Բաղդասարյանի վեճի մասին էժանագին բամբասանքը իրականության հետ ոչ մի կապ չի կարող ունենալ եւ մամուլում հերքվել է դեռեւս անցած տարվա մայիս ամսին թե Աշոտ Գիզիրյանի եւ թե իմ կողմից, քանզի այդ հրաշալի հարսանիքի մասնակիցն եմ եղել: Ավելին, թե Արթուր Բաղդասարյանի եւ թե ՕԵԿ-ի հետ ոչ ոք չի կարող սպառնալիքով խոսել՝ էլ չեմ ասում շարությունից եւ նախանձից կուրացած Մակեյանները: Ափսոսանք եմ հայտնում նաեւ, որ «Առավոտի» պես ճանաչված եւ հեղինակավոր օրաթերթը տեղ է տալիս մեկամյա վաղեմություն ունեցող եւ բազմիցս հերքված այդպիսի շարամիտ նյութի հրապարակմանը»,- նշել է պարոն Մարգարյանը:

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ

Օսկանյանի պատասխանատվության մասին չեն մոռացել

Երեկ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության համագումարից հետո հրավիրված բրիֆինգին, պատասխանելով լրագրողներից մեկի հարցին՝ ինչպե՞ս են բացատրում «Հայաստանի ժողովրդավարացման ընթացքին խոչընդոտող ուժեր» լինելու պատճառաբանությամբ ՀՀԿ-ին, ԲՀԿ-ին եւ ՕԵԿ-ին համագումարին չհրավիրելու եւ այդ ֆոնին համագումարում ԲՀԿ անդամ Վարդան Օսկանյանի ներկայության փաստը, «Ազատ դեմոկրատների» ներկայացուցիչ Արարատ Զուրաբյանն ասաց. «Վարդան Օսկանյանի հրավիրված լինելը նրան չի ազատում «Մարտի 1»-ի իրադարձությունների համար պատասխանատվությունից: Կարծում եմ՝ բավարարված եք»: Շեշտվեց նաեւ, որ նա հրավիրվել է որպես անհատ՝ Վարդան Օսկանյան: Իսկ թե ինչո՞ւ կուսակցությունը չի հրավիրել նաեւ ՀԱԿ առաջնորդ, ՀՀ առաջին նախագահ Լեւոն Տեր-Պետրոսյանին՝ կուսակցության նախագահ Խաչատուր Քոքոբելյանն ասաց, թե խորին հարգանք տածելով հիմնադիր նախագահի անձի հանդեպ՝ այդուամենայնիվ, գտնում է, որ նրան հրավիրելը ձեւական բնույթ կկրեր:

Կարդացեք էջ 3:

«Տաշած քարը գետնին չի մնա»

«Արտախորհրդարանական ուժերի մեջ ՀԺԱՄ-ը բավականին լավ դիրք էր զբաղեցնում, հատկապես իր երիտասարդական թեւով եւ թվաքանակով: Մենք մի քանի հազար անդամ ունենք այսօր, ինչը շատ այլ ուժերի մասին չի կարելի ասել: ՀՀԿ-ի ինտեգրվելով՝ մեր «քաշային կատեգորիայից», ուզում ենք, որ մյուս փոքրերն էլ հասկանան՝ իրենց գոյությունը ոչ իրենց համար է ձեռնտու, ոչ էլ ՀՀ-ի: Ամեն կուսակցություն ունի մի լավ ծրագիր, լավ քաղաքական դեմք: Պետք է ամբիցիաները հաղթահարել, ինտեգրվել մեծերի մեջ կամ փոքրերով: Մնացյալը, ինչպես ժողովուրդն է ասում՝ «տաշած քարը գետնին չի մնա»,- «Առավոտի» հետ զրույցում ասաց արդեն լուծարվող ՀԺԱՄ նախագահ Վահրամ Մկրտչյանը:

Կարդացեք էջ 2:

Այսուհետեւ Արմեն Շեկոյանի «Հայկական ժամանակ» վեպը կարող եք կարդալ www.aravot.am կայքում:

ԲԱՐԻ ԼՈՒՅՍ

Համագումար

Այսօր, ժամը 12-ին, Մարզահամերգային համալիրում տեղի կունենա ԲՀԿ համագումարը:

Եղանակ

Երեւան -4 +8, Շիրակ -13 +4, Կոտայք -13 +4, Գեղարքունիք -13 +4, Լոռի -9 +8, Տավուշ -4 +12, Արագածոտն լեռներ -13 +4, Արագածոտն նախալեռն. -6 +8, Արարատ -4 +9, Արմավիր -4 +9, Վայոց Ձոր լեռներ -13 +4, Վայոց Ձոր նախալեռն. -4 +9, Սյունիքի հովիտներ -2 +14, Սյունիքի նախալեռներ -6 +7

ՀԱԿ-ը բողոքել է, որ չեն կազմակերպվում բանավեճեր

Երեկ Հայ ազգային կոնգրեսի համակարգող Լեւոն Զուրաբյանի գլխավորած պատվիրակությունը հանդիպել է Գերմանիայի Դաշնության կառավարության Մարդու իրավունքների քաղաքականության եւ Մարդասիրական օգնության հանձնակատար Մարկուս Լոհինգի հետ: Հանդիպման ընթացքում քննարկվել է խորհրդարանական ընտրություններին ընդառաջ Հայաստանում ստեղծված իրավիճակը:

Ըստ ՀԱԿ մամուլի հաղորդագրության՝ անդրադարձ է եղել քարոզարշավի լուսաբանման խնդիրներին: Կոնգրեսի ներկայացուցիչները շեշտել են հեռուստատեսային ալիքների կողմնակալ վերաբերմունքը ընդդիմության գործունեության լուսաբանման ուղղությամբ, ինչպես նաեւ այն փաստը, որ քարոզարշավի մեկնարկի շեմին հանրային եւ մասնավոր հեռուստաընկերությունների կողմից չեն կազմակերպվում քաղաքական դեբատներ:

Աղքատ Ազատամուտի 2500 բնակիչներից 700-ը ՀՀԿ անդամ է

Իջեւանի Ազատամուտ համայնքի շուրջ 2500 բնակիչներից շուրջ 700-ը ՀՀԿ անդամ է: Գյուղապետ Ժորա Մարտիրոսյանը հպարտությամբ ասաց, որ 2011թ. ապրիլին, երբ ինքը ստանձնեց ՀՀԿ Ազատամուտի կազմակերպության ղեկավարի պաշտոնը, գյուղում այդ կուսակցության անդամների թիվը 180 էր, որ ավելի քան 500 հոգի ՀՀԿ-ին անդամագրվել է 2011թ. ապրիլից մինչ օրս: Նշենք, որ գյուղապետ Ժ. Մարտիրոսյանը մինչ ՀՀԿ-ին անդամագրվելը ԲՀԿ անդամ էր:

Ազատամուտի բնակիչ, 62-ամյա գործազուրկ Սաշա Ալավերդյանը զարմանում է, որ աղքատ համայնքի չափահաս բնակչության մի զգալի մասը անդամագրվել է ՀՀԿ-ին: Նրա խոսքերով՝ Ազատամուտի բնակիչներն աշխատանք չունեն եւ ապրում են անտառի հատապտղով: Նախկին բանավանը հիմնվել է բենտոնիտի փոշու վերամշակման գործարանի հենքի վրա: Այնտեղ նախկինում 1000 մարդ էր աշխատում, սակայն գործարանն այժմ շատ փոքր հզորությամբ է գործում: Լուծարված են կամ անհնշան չափով են գործում Ազատամուտի ձեռնարկությունները՝ բնակշինկոմբինատը, հիդրոմելորացիայի, գյուղտեխնիկայի եւ ոռոգման համակարգերի ձեռնարկությունները:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Ով ումից է սովորել

«Ես կասեի՝ մենք էլ սովորել ենք Հայաստանից, եւ այն տնտեսական աճերն ու զարգացման տեմպերը, որոնք արձանագրել ենք մեր տնտեսության գերակա ճյուղերում՝ հանքարդյունաբերություն, գյուղատնտեսություն, Հայաստանի կառավարության շնորհիվ է: Եթե վերցնենք հետպատերազմյան տարիները, ապա երբեւէ այդքան աջակցություն չի ցուցաբերվել Արցախին, որքան վերջին տարիներին: Հայաստան-Արցախ տնտեսական գործակցությունն այսօր առավել խորն է եւ ակտիվ: Չմոռանանք նաեւ, որ Հայաստանի տնտեսության զարգացումից է ի վերջո կախված Արցախի տնտեսության զարգացումը»,- Haynews.am-ի հարցին՝ Հայաստանում որոշ տնտեսագետներ Հայաստանի տնտեսական քաղաքականությունը գնահատելիս ակնարկում են, թե երկրի կառավարությունը Արցախի կառավարությունից սովորելու բան ունի՝ մասնավորապես հիշեցնելով այն ժամանակահատվածը, երբ Հայաստանում տնտեսական անկում էր, իսկ ԼՂՀ-ում՝ տնտեսական աճ. ըստ ձեզ՝ Հայաստանի գործադիր մարմինն իրականում սովորելու եւ ընդօրինակելու բան ունի՞ Արցախի կառավարությունից, պատասխանել է ԼՂՀ վարչապետ Արա Հարությունյանը:

Բարսեղ Բեգլարյանը չի պարտադրել

ՀՀԿ-ին միավորվելու որոշման ժամանակ ՀԺԱՄ նախագահ Վահրամ Մկրտչյանի համար համամասնական ցուցակում տեղ զբաղեցնելն առաջնային չի եղել:

Նախորդ օրը երեկոյան «Հայաստանի ժողովրդավարական ազատական միություն»՝ ՀԺԱՄ կուսակցության քաղաքական խորհուրդը հայտարարություն տարածեց կուսակցության լուծարման եւ Հայաստանի Հանրապետական կուսակցության հետ միավորվելու մասին: ՀԺԱՄ քաղխորհրդի նախագահ Վահրամ Մկրտչյանից «Առավոտը» հետաքրքրվեց՝ ո՞րն է նման՝ ինչ-որ առումով անակնկալ որոշման պատճառը, այն պարագայում, երբ վերջին ամիսներին ԱԺՄ-ից երբեւէ «ծնված» կուսակցությունները (ՀԺԱՄ-ն էլ դրանցից մեկն է) վերամիավորման մասին բանակցություններ էին վարում: Իրենց այս քայլը Վահրամ Մկրտչյանը մի քանի հանգամանքով պայմանավորեց.

- 2007 թվականի խորհրդարանական ընտրություններին ՀԺԱՄ-ը չի մասնակցել եւ պաշտպանել է ՀՀԿ-ին: 2008-ի նախագահական ընտրություններին ՀԺԱՄ-ը պաշտպանել է ՀՀԿ նախագահ Սերժ Սարգսյանի թեկնածությունը: 2008-ի ընտրություններից հետո ՀԺԱՄ-ը որդեգրել էր մի ուղղություն, որտեղ առաջնային էր հոշակել Հայաստանի համագործակցային մոդելը, եւ մենք բարձրաձայնում էինք, որ քաղաքական դաշտի խաղացողները պետք է խոշորանան, որպեսզի ավելի արժանապատիվ եւ հարատեւ գործունեություն ապահովվի: Ինչպես դուք վկայեցիք, անցյալ տարի մենք նախաձեռնել էինք ԱԺՄ-ից սերված չորս կուսակցությունների վերամիավորման գործընթացը, որն այդպես էլ, կարելի է ասել, իր տրամաբանական ավարտին չհասավ: Բացի այդ, անցյալ տարվա աշնանը, մեր նախաձեռնությամբ, փորձեցինք նաեւ մի քանի արտախորհրդարանական կուսակցությունների հետ որոշակի ճեւաչափ գտնել, որպեսզի մասնակցեինք խորհրդարանական ընտրություններին, որի նպատակը համագործակցությունն ու կուսակցությունների խոշորացումն էր: Երբ նման գործընթացները, կարելի է ասել, այդպես էլ չեկան իրենց տրամաբանական ավարտին, իմ թվարկած ճանապարհներից ելնելով՝ նման որոշում կայացվեց: ՀՀԿ-ին միանալուվելու կամ ինտեգրվելու վերջնական որոշման վրա ազդեցություն ունեցավ նաեւ հանրապետության նախագահի եւ հատկապես վարչապետի վարած տնտեսական քաղաքականությունը՝ փոքր ու միջին գործարարության ճեւավորման, աջակցության առումով: Դրանք համահունչ են ՀԺԱՄ-ի հիմնական կարգախոսին եւ նպատակին:

- Թեեւ վերջին ընտրություններում ՀԺԱՄ-ը ՀՀԿ-ի կողքին էր, բայց դա չխանգարեց, որ այս տարիների ընթացքում Դուք բավականին քննադատաբար արտահայտվեք ՀՀԿ-ի եւ նախագահ Սարգսյանի վարած հատկապես ներքին քաղաքականության մասին: Վերջերս ՀԺԱՄ-ի 10-ամյակի համաժողովում Դուք քննադատեցիք հանրապետության մարզերը խանությունների վերածելը, անգամ հեգնանքով նկատեցիք, որ այդ ամենից հետո մնում է Սերժ Սարգսյանին էլ «արքայից արքա» տիտղոսը տալ: Դա չխանգարե՞ց:

- Այո, մենք կարծում ենք, որ նման երեւույթ կա հանրապետությունում, բայց նաեւ իմ ելույթի վերջաբանում ես հստակ ասել եմ, որ նախագահի մոտ տեսնում ենք այն վճռականությունը, որով նա գնում է ֆեոդալական մտածողության կոտրմանը: Ես ելույթս ամփոփել եմ այսպես՝ ՀԺԱՄ-ն աղոթում է նախագահի համար, որ նա չընկրկի, տեղի չտա որոշ մարդկանց կամ ազդեցություն գործող խմբերի առջեւ, եւ համագործակցային մոտեցումը հաղթանակի: Համոզված եմ, որ տեղի չի տա: Դա են վկայում նախընտրական գործընթացները, ՀՀԿ-ի գործադիր մարմնի թարմացված կազմը՝ ի դեմս Արմեն Աշոտյանի եւ Տիգրան Սարգսյանի. սրանք ցույց են տալիս նախագահի ավելի դեմոկրատ մոտեցումը:

- ՀՀԿ մեծամասնական ցուցակում օլիգարխների պակաս չկա. դա՞ է չընկրկելը կամ դրական միտումը:

- Օրինակ՝ թիվ 1 ընտրատարածքում՝ Ավանում, որտեղ միշտ Ռուբեն Հայրապետյանն է առաջադրվել...

- Դա միակ բացառությունն է:

- Կարելի է ասել՝ գործընթացը սկսվեց: Այդտեղ առաջադրվում է Էդիկ Գեւորգյանը՝ Մանկավարժական համալսարանի իրավունքի եւ պատմության ֆակուլտետի դեկանը: Այսինքն՝ մեկ հարուստ մարդ դուրս եկավ, նրա փոխարեն մտնում է մեկ մտավորական: Ամեն ինչ միանգամից չի լինում: Իհարկե, լավ կլիներ, որ բոլոր տեղերում միանգամից նույն մոտեցումը լիներ, բայց այս պահին սա է, եւ կարծում եմ, որ հաջորդ խորհրդարանում մտավորականների թիվը ավելի մեծ կլինի:

- ՀՀԿ-ի հետ ինտեգրման արդյունքում Դուք կլինե՞ք ՀՀԿ համամասնական ցուցակում:

- Չեմ կարող ասել, եւ այս քայլն էլ դրա համար չի արված: Այս քայլը խորը քաղաքական վերլուծության արդյունք էր: Մենք կողմ ենք ավելի խոշոր քաղաքական միավորներով շարունակել հետագա գործընթացները: Իսկ համամասնական ցուցակն իմ մասով, անկեղծ եմ ասում, այդքան էական չէ՝ կլինեմ այնտեղ, չեմ լինի, որ համարում կլինեմ: Մենք ինտեգրվում ենք մեծ թիմի մեջ՝ հասկանալով եւ բարդությունները, եւ տրամաբանությունը, եւ դրական միտումները. ու եթե ինտեգրվում ենք, ուրեմն պիտի խաղի կանոններն էլ ընդունենք:

- Ինչքան էլ այդ գործընթացը քաղաքական որակեք, այնուհանդերձ՝ ՀԺԱՄ-ի թիկունքում մշտապես եղել է հայտնի օլիգարխ, բենզինի շուկայում գերիշխող դեր զբաղեցնող «Ֆլեշ» ընկերության սեփականատեր Բարսեղ Բեգլարյանը, որը նաեւ նախագահ Սարգսյանի մտերիմներից է: Արդյոք այդ քայլը փոխադարձանավորվածության կամ ճնշման արդյունք չէ՞ նաեւ:

- Ամենեւին: Ես քանիցս առիթ ունեցել եմ ասելու, որ Բարսեղ Բեգլարյանի հետ ՀԺԱՄ-ի կապի մասին խոսակցությունները սկսեցին շրջանառվել այն պատճառով, որ ես զբաղեցնում եմ «Բարեպաշտ սերունդ» հասարակական կազմակերպության տնօրենի պաշտոնը: Բայց դա կապ չունի:

- Հնարավո՞ր է, որ ԱԺԴ-ն, ԱԺԿ-ն, ԱԺՄ-ն էլ հետեւեն ՀԺԱՄ-ի օրինակին, քանի որ բոլորն էլ այսօր իշխանական դաշտում են գործում:

- Դժվարանում եմ պատասխանել, այս քայլը կատարելուց առաջ իրենց հետ քննարկում չեմ ունեցել: Չեմ կարող ասել՝ իրենք ինչ են որոշել, ինչպես պետք է մասնակցեն ընտրություններին: Մենք միմյանց առջեւ պարտավորություններ չունեինք. ընդամենը գործընթաց էինք սկսել, որն այդպես էլ չհասավ տրամաբանական ավարտին:

ՆԵԼԼԻ ԳՐԻԳՈՐՅԱՆ

Մեծամասնականով առաջադրվել են եւս 17 թեկնածուներ

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի տվյալներով՝ երեկ մեծամասնական ընտրակարգով առաջադրվել են եւս 17 թեկնածուներ: Նրանց շարքում են նաեւ անվանի գործարարներ: Թիվ 6 ընտրատարածքում «Վասանավի» ընկերության տնօրեն, ԲՀԿ-ական Վահան Կարապետյանն է թեկնածություն առաջադրել, 7-րդ ընտրատարածքում էլ՝ անկուսակցական, ԱԺ պատգամավոր Սամվել Ալեքսանյանը, իսկ 8-րդ ում՝ ՀՀԿ-ական, ԱԺ պատգամավոր Կորյուն Նահապետյանը:

Թիվ 11 ընտրատարածքում «Մուշ-Մեդա» ընկերության տնօրենների խորհրդի նախագահ, ՕԵԿ-ական Էդուարդ Մադաթյանն է, 12-ում՝ ԲՀԿ-ական, ԱԺ պատգամավոր Լյովա Խաչատրյանը, 25-ում՝ ԲՀԿ-ական Դավիթ Քոչարյանը, թիվ 27-ում էլ արդեն առաջադրված Համլետ Հայրապետյանին միացել է ԲՀԿ-ական ԱԺ պատգամավոր Մուրադ Գուլոյանը:

Գործարարի թեկնածություն կա նաեւ թիվ 28 ընտրատարածքում. այստեղ ԲՀԿ-ական, ԱԺ պատգամավոր Գագիկ Ծառուկյանն է, 29-ում՝ անկուսակցական, ԱԺ պատգամավոր Արկադի Համբարձումյանը, իսկ թիվ 32-ում՝ միանգամից երկու անկուսակցական է ինքնաառաջադրվել՝ Արտակ Միրզոյանն ու անհատ ձեռնարկատեր Էդուարդ Չատինյանը: 33-ում՝ ՕԵԿ-ական, ԱԺ պատգամավոր Հովհաննես Մարգարյանն է, 35-ում՝ անկուսակցական, «Գյումրի-Գարեջուր» ընկերության լաբորատորիայի վարիչ Հայկ Սուլթանյանը: 39-ում՝ էլ կրկին ՀՀԿ-ական, ԱԺ պատգամավոր Աշոտ Արսենյանն ու անկուսակցական, «Վայք» ՁՕԸ գլխավոր հաշվապահ Գորկի Գրիգորյանը: Իսկ 41-ում նախօրեին արդեն առաջադրված երկու թեկնածուներին ավելացել են եւս երկուսը՝ անկուսակցական, «Ձիովանն» ընկերության մատակարար Սպարտակ Հարությունյանն ու ՕԵԿ-ական, Տավուշի մարզպետի տեղակալ Վահե Վարդապետյանը:

Ա. ՍԻՄՈՆՅԱՆ

Լյուդմիլայի մեղադրանքը ուղի՞ղ, թե՞ ծուռ էր

Արդարադատության նախարարությունը սկսել է վարչական վարույթ ու քննում է ՍԴՀԿ նոր խմբագրությամբ կանոնադրության եւ «նոր ատենապետի» մասին տեղեկությունների գրանցումը անվավեր ճանաչելու մասին ՍԴՀԿ ատենապետ Լյուդմիլա Սարգսյանի բողոքը: Վերջինիս այն պնդումներին, թե նախարարությունը միտումնավոր երկարացնում է անվավեր ճանաչելու մասին որոշումը, որ իրենք չկարողանան ՀԱԿ-ի հետ դաշինք կազմել, երեկ արդարադատության նախարար Հրայր Թովմասյանը Aravot.am-ի հետ զրույցում ասաց, որ բողոքը քննում են սահմանված ժամկետների շրջանակում. 30 օրվա ընթացքում կպարզեն, թե պետռեգիստրը իրավաչա՞փ որոշում է կայացրել, թե՞ ոչ:

Լ. Սարգսյանի ներկայացրած ուղիղ մեղադրանքին էլ նախարարությանը պարոն Թովմասյանը կասկածով է վերաբերվում. «Չգիտեմ՝ այդ մեղադրանքը ուղիղ էր կամ որոշակիորեն ծուռ էր»: Պարոն Թովմասյանը նաեւ նկատեց, որ երկու կողմերի՝ իրենց ՍԴՀԿ ատենապետ ներկայացնողների ներկայացրած փաստարկները խիստ տարբեր են, եւ բոլոր մանրամասները կպարզվեն մի քանի օրից:

Ա. Ս.

«Ազատ դեմոկրատները» մտավ ակտիվ քաղաքական փուլ

Երեկ համագումարում այդ մասին ազդարարեց կուսակցության ղեկավար Խաչատուր Քոքոբելյանը

Երեկ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության 2-րդ՝ արտահերթ համագումարում է, որի լեյտմոտիվն առաջիկա խորհրդարանական ընտրություններն էին, շտրվեց առավելապես լրագրողներիս ու նաեւ քաղաքական դաշտին հետաքրքրող հարցի պատասխանը՝ հիմա ազատ դեմոկրատներն ու ժառանգականները նախընտրական դաշինքո՞վ են գնում ընտրությունների, թե՞ «հոգով» միասին, բայց՝ առանձին-առանձին: Պատահական չէր, որ համագումարից հետո «Ազատ դեմոկրատների» ղեկավար կազմի հետ բրիֆինգի ժամանակ լրագրողների հարցերի առյուծի բաժինը տարբեր ձեւակերպումներով, բայց վերաբերում էր հենց այս հարցին: Մի բան, սակայն, հստակ է ու ակնհայտ՝ եւ «Ազատ դեմոկրատները», եւ «Ժառանգությունն» իրենց որոշումները հրապարակելու են միեւնույն մարտի 22-ը, որովհետեւ դա ԿԸՀ-ում քաղաքական ուժերի առաջադրման վերջնաժամկետն է:

Իսկ կուսակցության համագումարն իրենց ներկայությամբ հարգել էին ՀՅԴ, «Նոր ժամանակներ», նաեւ ՀԱԿ-ին մաս կազմող «Քրիստոնեա-ժողովրդական վերածնունդ», «Հանրապետություն», «Ժողովրդավարական Հայրենիք» ու Պահպանողական կուսակցությունների առաջնորդներն ու ղեկավար մարմնի ներկայացուցիչները: Իշխանական կոալիցիան ներկայացնող ուժերը համագումարին չէին հրավիրվել, որովհետեւ «Ազատ դեմոկրատները» նախընտրել էր իրենց համագումարում տեսնել քաղաքական այն ուժերին, որոնք «չեն խոչընդոտում Հայաստանի ժողովրդավարացման ընթացքը»: Չերեւացին նաեւ մանր-մունր կուսակցություններից որեւէ մեկի ներկայացուցիչները, չկար նաեւ ՀՀՇ-ն, որովհետեւ չէին հրավիրել, քանի որ, ինչպես ազատ դեմոկրատ, իսկ նախկինում ՀՀՇ վարչության նախագահ Արարատ Զուրաբյանն ավելի ուշ բացատրեց՝ «ՀՀՇ-ից ում պետք է հրավիրեինք՝ այստեղ են»: Փոխարենը ներկա էին անկուսակցական քաղաքական գործիչներ՝ ի դեմս Աշոտ Մանուչարյանի, Հմայակ Հովհաննիսյանի եւ այլոց:

Ինչ վերաբերում է համագումարին, ապա այն անցավ բավականին բուռն ելույթների մթնոլորտում եւ դահլիճում տեղ չլինելու պատճառով ոտքի վրա մնացած մասնակիցների պայմաններում: Նախ՝ համագումարին ողջույնի խոսք ասաց ՀՅԴ ԳՄ ներկայացուցիչ Արմեն Ռուստամյանը, որի ելույթից պարզ դարձավ, որ այս երկու կուսակցությունները հեռանկարում ընդհանուր համագործակցության եզրեր ունեն: Նա կարեւորեց իշխանությունների վերարտադրությունը կանխելուն ուղղված քաղաքական ուժերի ջանքերի համատեղումն ու ողջունեց «Ազատ դեմոկրատների» ակտիվ մասնակցությունը ՀՅԴ-ի ու «Ժառանգության»՝ Աժ 100 տոկոսանոց համամասնական ընտրակարգին անցնելու օրենսդրական նախաձեռնության հետ կապված գործընթացները, նաեւ հավելեց, թե երկու կուսակցություններն էլ համակարծիք են եւ անհրաժեշտ են համարում Հայաստանի պետական կառավարման համակարգի փոփոխությունը՝ նախագահական կառավարման համակարգից խորհրդարանականին անցնելը, որը, Արմեն Ռուստամյանի մատուցմամբ, ՀՅԴ-ն նույնպես այս ընտրությունների ընթացքում լայնորեն պաշտպանելու է:

«Մենք իսկապես տեսնում ենք բազմաթիվ լուրջ առաջարկներ եւ խնդիրներ, որոնք կարող ենք միասին իրականացնել, եւ ես վստահ եմ, որ համախմբված կարող ենք մեր երկիրը դուրս բերել այս ճգնաժամային իրավիճակից եւ իսկապես ունենալ մեր երազած Հայաստանը»,- եզրափակեց Արմեն Ռուստամյանը:

Համագումարում ելույթ ունեցավ նաեւ «Ժառանգության» առաջնորդ Ռաֆֆի Հովհաննիսյանը, որին ներկաները ջերմորեն դիմավորեցին եւ տեղ-տեղ ծափահարություններով ընդհատեցին նրա ելույթը: Իսկ Հովհաննիսյանն ասաց, թե «Ազատ դեմոկրատներն» իր երկրորդ համագումարն է գումարում, «բայց իր առանցքով, արժեքներով, չափանիշներով, հին եւ նոր սերունդներով կանգնած է Հայաստանի ինքնիշխանության եւ անկախության ակունքներում», որ նրանց մեջ «որպես անհատներ ու որպես հավաքական ուժ, փորձառություն ունեցողների՝ տեսնում է պետության դասական իմաստով կուսակցություն ասվածը, ըստ բանախոսի, «ընկալելի է միայն այն դեպքում, երբ արված է քաղաքակրթական ընտրանքը»: Նա ասաց, թե անհամբեր սպասում է այն ազդեցիկ քաղաքական ուժի ծննդին, որն «առանց ռեալ-պոլիտիկի աճուկների ետեւում թաքնվելու, առանց ծեքծեքումների կիայտարարի, որ մեր պետականության կայացման խոչընդոտը ռուսական իմպերիալիզմն է, որ մեր պետականության կայացման առաջին քայլը ռուսական գաղութատիրությունից ազատագրումն է, որ մեր անվտանգության ու զարգացման խոչընդոտը ՀԱՊԿ-ի պես փտած ու տոտալ ժանդարմի գործառույթներ ունեցող կառույցն է, որ մեր քաղաքական մշակույթի անկատարությունը ԱՊՀ կոչված անախրոնիզմն է, որ մեր պետության անվտանգության հուսալի երաշխիքը մեզ իսկապես հարազատ արեւմտյան քաղաքակրթությունն է՝ իր անվտանգության համակարգ ՆԱՏՕ-ով: Քանի դեռ Հայաստանում են գտնվում 1920թ.-ից այստեղ մնած ու այդպես էլ դուրս չեկող ռուսական օկուպացիոն զորքերը, որոնց ռազմաբազա անվանելով՝ որպես ձրիակերների դեռ պատրաստվում ենք պահել եւս 49 տարի, ապա մետրոպոլիայի օրինակով Հայաստանում եւս մշտապես լինելու են ընտրական համակարգի ձեւախեղումը, ժողովրդավարության լլկումը, թերուսների տոտալ գավառակրատիան, կոռուպցիոն համակարգը, որքան էլ որ թութակի պես կրկնենք, թե համակարգային փոփոխություններ են անհրաժեշտ»:

Հայրապետյանն ասաց, թե «Ազատ դեմոկրատները» հույս է ներշնչում, որ «աղագաղութատիրական պայքարում»՝ ի դեմս այդ կուսակցության, «ունենալու ենք զորեղ դաշնակից, եւ Հայաստանում եւս, ինչպես հարեւան Վրաստանում, օկուպացիոն բանակին նվիրված հուշարձանները փոխարինվելու են Ազատության, Հավասարության, Եղբայրության կոթողներով»: Մաղթեց, որ կուսակցությանը «հաջողվի վերջապես բացել ԿԳԲ-ի արխիվները եւ քաղաքական հետաքննդումների մասնակիցներին հեռու պահել մեր պետության նավի ղեկից», ու նաեւ հավելեց՝ «այսպիսի աշխարհընկալման եւ ձեռնարկումների պարագայում իր համեստ ուժով Պահպանողական կուսակցությունը կլինի «Ազատ դեմոկրատների» ջերմեռանդ դաշնակիցը»:

Ելույթ ունեցավ նաեւ «Ազատ դեմոկրատներ» կուսակցության ղեկավար Խաչատուր Քոքոբելյանը, որն ազդարարեց կուսակցության ստեղծումից եւ հիմնադիր համագումարից հետո «մեր ակտիվ քաղաքական գործունեության՝ արդեն որակապես նոր փուլ մտնելու պաշտոնական մեկնարկը»: Նա անդրադարձավ կուսակցության ստեղծման շարժառիթներին, խոսեց նաեւ Հայաստանում տնտեսության ոլորտում, արդարադատության համակարգում առկա վիճակի մասին՝ ասելով, թե կուսակցության ստեղծման հիմքում դրվել է անհատի գերակայության սկզբունքը, որ «ժողովրդավարությունը ոչինչ է առանց մարդու ազատության, ու ազատությունը բացարձակ արժեք է, ինչպես մարդու կյանքը», որ միայն ազատ Հայաստանը կարող է պաշտպանել իր քաղաքացիների բարեկեցությունն ու անվտանգությունը: Ներկայացվեց նաեւ արտաքին քաղաքականության ոլորտում կուսակցության որդեգրած հիմնական սկզբունքներն ու գերակայությունները, որոնք արձանագրված են նաեւ համագումարի ընդունված բանաձեւում, որն ամբողջությամբ, ինչպես նաեւ Խ. Քոքոբելյանի ելույթը կարող եք կարդալ Aravot.am կայքում:

Ի դեմ, համագումարն իր ամփոփիչ բանաձեւում լիազորեց կուսակցության վարչությանը՝ որոշելու առաջիկա խորհրդարանական ընտրություններին մասնակցության ձեւաչափը: Ինչ վերաբերում է այդ ձեւաչափին, ապա համագումարից հետո հրավիրված բրիֆինգի ժամանակ կուսակցության ներկայացուցիչ Արարատ Զուրաբյանն ասաց, թե երկու կուսակցությունների նախընտրական դաշինքի վերաբերյալ որոշումը ձգձգվում է բացառապես տեխնիկական խնդիրների պատճառով, որ սկզբունքորեն որեւէ այլ հարց դրան չի խոչընդոտում՝ միաժամանակ չբացառելով, որ դաշինքը կարող է եւ չկայանալ, եթե... «Ոչինչ չեմ ուզում բացառել, բայց ասեմ, որ 99 տոկոսով խնդիրը լուծված է, եթե ինչ-որ նոր միջուկային պատերազմ չլինի, հավատացած եղեք, որ այս գործընթացն իր տրամաբանական հանգրվանին կհասնի»: Խոսելով դաշինքի ձեւավորման դեպքում համամասնական ցուցակի դասավորվածության մասին՝ Խաչատուր Քոքոբելյանն այն չկարեւորեց, նաեւ հայտարարեց, թե ինքն ու իր կուսակիցները կարծում են, որ ճիշտ կլինի, եթե համամասնական ցուցակը գլխավորի Ռաֆֆի Հովհաննիսյանը, որ այդ ցուցակում ընդգրկված լինեն ոչ միայն քաղաքական, այլեւ հասարակական գործիչներ, որոնք ոչ պակաս ներդրում ունեն քաղաքացիական հասարակության ձեւավորման գործում:

ՆԱԻՐԱ ՄԱՄԻԿՈՆՅԱՆ

Անհետեւանք են մնում «Մարտի 1»-ի հանրային հետազոտությունները

Ասում է Փաստահավաք խմբի նախկին անդամ Անդրանիկ Քոչարյանը

Ինչպես արդեն տեղեկացրել ենք, ԵԽԽՎ-ն գաղտնազերծել է Հայաստանի հարցով համազեկուցող Զոն Պրեսկոտի՝ հունվարի 16-17-ին Երեւան կատարած այցի վերաբերյալ Մոնիթորինգի հանձնաժողովում քննարկված տեղեկատվական փաստաթուղթը, որտեղ անդրադարձ կա 2008 թվականի մարտի 1-ին 10 զոհերի մահվան հետաքննությանը: Հիշատակելով 2011 թվականի ապրիլի 20-ին նախագահ Սերժ Սարգսյանի հանձնարարականը՝ կրկին եւ առավել մանրակրկիտ անդրադառնալ 2008-ի դեպքերին, համազեկուցողները հիշեցրել են, որ իրենք առաջարկել էին, որ ՀՀ նախագահը երաշխավորի, որ այդ հետաքննությունն անցկացվելու է հանրային հետազոտության ձեւով, որում ներգրավված կլինեն առաջին հերթին նաեւ մարտիմեկյան իրադարձությունների զոհերի հարազատները:

«Մարտի 1»-ի դեպքերն ուսումնասիրող Փորձագետների փաստահավաք խմբի նախկին անդամ Անդրանիկ Քոչարյանը մեզ հետ զրույցում անդրադառնալով համազեկուցողների այս առաջարկին՝ ասաց, թե փաստաթղթում կամ համազեկուցողների կողմից բացատրված չէ՝ ի՞նչ բան է հանրային հետազոտությունը: «Գուցե այդ առաջարկն անողները, Պրեսկոտը պատկերացնում են, թե դա ինչ է, որովհետեւ եվրոպական երկրներում, որտեղ հասարակական կարծիքը շատ պարտադիր է որոշումներ կայացնելիս, հանրային հետազոտություններն ունենում են իրավական հետեւանքներ, եւ գուցե իրենք դրանից ելնելով է, որ առաջարկում են հանրային հետազոտություն անել: Հայաստանում հանրային հետազոտություններ փաստացի տեղի են ունենում 4 տարի շարունակ: Չորս տարի է եւ մամուլում, եւ հրապարակներում, եւ տարբեր միջոցառումների ժամանակ, նաեւ Փաստահավաք խմբի զեկույցներում հանրային հետազոտություններ են արվել, որոնք հետեւանք չեն ունեցել, նաեւ իրավապահ մարմիններն են քննություն տարել, որն այդպես էլ որեւէ խնդրի լուծում կամ պատասխան չի տվել: Այսինքն՝ ինձ համար հանրային հետազոտություն ասվածը Հայաստանի դեպքում ընկալելի չէ»,- հայտարարեց Անդրանիկ Քոչարյանը:

Նա հիշեցրեց, որ դեռ ամիսներ առաջ պատեհ առիթով՝ երբ իշխանությունները շարունակեցին ամեն ինչ անել «Մարտի 1»-ը չբացահայտելու համար, երբ ՀՔԾ-ում չկատարեցին Սերժ Սարգսյանի հավաստիացումը՝ «Մարտի 1»-ի էջը փակված չհամարելու վերաբերյալ, եւ հրապարակեցին իրենց այդ խայտառակ միջանկյալ զեկույցը, հայտարարել էր, որ զոհերի հարազատներին ու մեր հանրությանը մնում է արագ եւ ինքնակազմակերպված ձեւով Ազատության հրապարակում հանրային դատ իրականացնել: «Մարտի 1»-ի բացահայտման լուծումը ես տեսնում էի հանրային դատն իրականացնելու միջոցով: Հանրային քննարկումները, կրկնում եմ, եղել են 4 տարի շարունակ եւ հետեւանք՝ իրավական, չեն ունեցել»,- արձանագրեց Անդրանիկ Քոչարյանը:

Ն. Մ.

Նյութն ամբողջությամբ՝ www.aravot.am-ում:

Պառլամենտում տեստաստերոնը պակասեցնելու կարիք կա

Իսկ դրա համար մեր երկրում գենդերային հավասարություն է պետք

«Էլ ի՞նչ հավասարություն, հեն ա, մարդուս հավասար աշխատում եմ, մի բան էլ ավելի: Մենակ տրակտոր չեմ քշում, բայց էդ էլ կանեմ, որ պետք լինի: Կին-տղամարդ հավասարությունը ո՞րն է, կնոջը դեռ մի բան էլ առավելություն պիտի տան: Էն, որ կինը տենց ցավերով երեխա է ծնում, մենակ էդ հերիք ա, որ կնոջը գոնե շուտ թոշակի ուղարկեն: Առաջ 5 երեխա ունեցող կնոջը մեդալ էին տալիս, բա հիմա՞: Մեր երկրում կրճատումների ժամանակ առաջինը կնոջն են գործից հանում: Որ ուզում ենք նոր աշխատանք գտնենք, ընտրություն էլ չկա: Մենակ սիրուն ոտքերով աղջիկները պահանջարկ ունեն»,- «Առավոտի» հետ զրույցում մեր հարցին, թե՝ կանանց եւ տղամարդկանց հավասար իրավունքների եւ ազատությունների մասին ինչ կարծիք ունեն, այսպես արձագանքեց տիկին Անահիտը, որը Մալաթիայի գյուղմթերքների շուկայում առեւտրով է զբաղվում: Մեր հարցի նպատակն էր պարզել, թե գյուղաբնակ կանայք ինչպես են վերաբերվում գենդերային հավասարությանը եւ առհասարակ ինչ գիտեն դրա մասին ու արդյոք կարողանո՞ւմ են իրենց իրավունքներն օգտագործել: Երբ մոտեցանք կարտոֆիլ վաճառող մարտուեցի մի կնոջ, նրա ամուսինը՝ իմանալով, որ խոսակցության թեման կարտոֆիլը չէ, բավականին ագրեսիվ տոնով իր տիկնոջը հրամայեց ոչ մի հարցի չպատասխանել:

Գյուղմթերքների առեւտրով զբաղվող մի կին էլ պարզապես դեմ էր կին-տղամարդ իրավահավասարությանը: Նրա կարծիքով՝ կինն իր տեղը պիտի իմանա. «Բայց եթե ընտանիքում փոխադարձ հարգանք լինի, էդ կինը լավ էլ ազատ ու ինքնուրույն կլինի»:

Այն, որ տղամարդն իրեն կնոջից առավել է դասում, մասնագետները պայմանավորում են դարերով եկած մարդկանց մտածելակերպով, որը փոխելու համար մի ամբողջ կրթական եւ դաստիարակչական համակարգ է պետք փոխել: Կրթության կառավարման մասնագետ, գենդեր եւ կրթական քաղաքականության դասախոս Նվարդ Մանասարյանի մեկնաբանությամբ՝ ի սկզբանե տղամարդը կնոջն ասել է՝ ես քո կյանքի իրավունքը կերաշխավորեմ, փոխարենը դու ինձ կտաս կյանքի շարունակության հնարավորություն, այսինքն՝ ժառանգներ. «Պատմականորեն մենք մեր անձնական լինել-չլինելու հարցը դարձրել ենք երկրորդական: Ամբողջ պայքարն այն է, որ թույլ տան կնոջը՝ ինքը որոշի, թե ինչ է ուզում լինել, իր դերն ինքն ընտրի: Թողե՛ք ես իմ սեռը ձեւավորեմ, թողե՛ք իմ եսը լինի հավասար»: Տիկին Մանասարյանի ներկայացմամբ՝ գենդերային խտրականությունը անուղղակի կերպով ձեւավորվում է դեռեւս երեխայի օրորոցից, դպրոցից մինչեւ շրջապատող միջավայրը: Այսինքն՝ այն, որ ծնողները աղջիկ երեխային տիկնիկ են տալիս՝ խաղալու համար, իսկ կոնստրուկտոր չեն տալիս, դրանով արդեն ուղղորդում եւ սահմանափակում են նրա ընտրելու իրավունքը. «Աղջիկը պետք է անպայման կոնստրուկտորով խաղա: Դա նրան հնարավորություն է տալիս ընտրելու, թե իրեն ինչ է ավելի շատ պետք կամ դուր գալիս»:



Նվարդ Մանասարյանը կոչ է անում թույլ տալ կնոջն ազատ ինքնարտահայտվել:

Իսկ մեր ընտանիքներում, հասարակությունում, ըստ Նվարդ Մանասարյանի, երեխայի փոխարեն արդեն որոշում են, թե նա ինչ մասնագիտություն ընտրի. «Որոշում են, որ աղջիկը պետք է մանկավարժ կամ բժիշկ դառնա, որովհետեւ իբր թե դա կնոջ մասնագիտություն է: Իսկ ո՞վ է ասել, որ Ֆիզիկան կնոջ մասնագիտություն չէ, կամ ճկնորսությունը բացառապես տղամարդու գործ է: Պետք է թույլ տալ՝ մարդն ինքն ընտրի, թե ինչով զբաղվի կամ ինչ դառնա»: Մասնագետի խոսքերով՝ օրինակ, այն, որ կանանց զբաղվածությունը ավելի շատ կրթական եւ սոցիալական ոլորտում է, հենց վերոնշյալի արդյունքն է: Իսկ խնդիրը արմատացած է ոչ միայն ընտանիքում, այլեւ նույնիսկ դպրոցներում, դասագրքերում, հեռուստատեսությունում. «Ինչո՞ւ պետք է մանկավարժը աղջիկ երեխային ասի, թե մաթեմատիկան տղամարդու առարկա է: Կամ գովազդներում, սերիալներում միայն կիսամերկ կին են ցույց տալիս, որը աղջիկների մոտ արդեն ձեւավորում է՝ թե ինքն ինչպիսին դառնա, որովհետեւ դրա պահանջը կա: Դա հստակ գենդերային խտրականություն է: Մեզ մոտ չկա, ասենք՝ լեռնագնաց կամ գիտական կնոջ կարծրատիպը: Մեզ մոտ կնոջ կարծրատիպը հետեւյալն է. 25-ից հետո՝ տունը մնացած, 40-ից հետո՝ դեպրեսիվ կին, 50-ից հետո՝ պառավ»: Մասնագետի ներկայացմամբ՝ սեռային հավասարության ձգտումը ոչ թե տղամարդ-կին ձեւավորումն է, ինչի մասին խոսում են տղամարդիկ, այլ՝ «Մարդկային տեսանկյունից հավասարություն, կոլեգաների միջեւ սեռային շփում չլինի, իրավահավասարությունը հարաբերությունների հավասարությունն է»: Իսկ նման իրավահավասարությունների հասնելու համար, մասնագետի վստահեցմամբ՝ նախ մտածելակերպն է պետք փոխել, իսկ պետությունն էլ պետք է իր ազդակները թողնի՝ սկսած դասագրքերից մինչեւ մեդիադաշտ: Իսկ ամենակարեւոր հանգամանքը, ըստ Ն. Մանասարյանի, հետեւյալն է. «Գաղափարներն է պետք փոխել: Մեր նորմատիվները շատ հին են, օրինակ՝ կարմիր խնձորը նորմատիվ է, բայց օրենք չկա, որ կինը պետք է սեռական հարաբերություն չունենա ամուսնանալուց առաջ: Նման լիքը նորմատիվներ ներդաշնակ չեն օրենսդրական դաշտին: Սահմանափակում ենք կնոջ՝ առանց ամուսին ունենալու մայր լինելու իրավունքը, դատաիրավական նման կանանց, եւ նման այլ նորմեր եւս սահմանափակում են կնոջ ընտրության իրավունքը»:

Մեզ հետ զրուցած կանայք, անկախ կրթությունից եւ գրաված դիրքից, այն կարծիքին են, որ բոլոր պետական ոլորտներում կանանց ներգրավվածությունը, հատկապես օրենսդիր մարմնում, պետք է հավասար լինի, քանի որ, ըստ նրանց, կանայք կարող են տղամարդկանցից ոչ պակաս փայլուն գաղափարներ ունենալ, նաեւ խաղաղություն մտցնելու ձիրք ունեն: Իսկ տիկին Մանասարյանն էլ այս առնչությամբ հետեւյալն ասաց. «Մեր պառլամենտում տեստոստերոնը պակասեցնելու անհրաժեշտություն կա, որպեսզի երկխոսություն ստեղծվի: Այո, եթե պետական ոլորտներում հավասար ներգրավվածություն լինի, կինը խաղաղեցնելու դեր կստանձնի: Նույնիսկ բանավիճելու ակումբներ չկան, որովհետեւ տղամարդն ասում է՝ ես ճիշտ եմ եւ վերջ, ի՞նչ բանավիճել»:

ՆԵԼԼԻ ԲԱԲԱՅԱՆ

Տիկին Անահիտն էլ տղամարդուն հավասար աշխատում է, բայց գտնում է, որ կնոջը պետք է առավելություն տալ:

Ջուր չեն ունենա

«Երեւան Ջուր» ընկերությունը տեղեկացնում է իր հաճախորդներին եւ սպառողներին, որ, վերանորոգման աշխատանքների հետ կապված, ս.թ. մարտի 17-ին, ժամը 11.00-ից մինչեւ մարտի 18-ի ժամը 11.00-ը կդադարեցվի Մալաթիա-Սեբաստիա վարչական շրջանի՝ Լենինգրադյան փողոցի 31/6, 31/8 շենքերի եւ հարակից տարածքների ջրամատակարարումը: Ընկերությունը հայցում է սպառողների ներողամտությունը՝ պատճառված անհանգստության համար եւ կանխավ շնորհակալություն հայտնում ըմբռնման համար:

«Երեւան Ջուր» ՓԲԸ

Կոմունիստներն ու դաշնակցականները նո՞ւյնպես հանրապետականներ են

Դեռեւս հունվար ամսին «Առավոտն» ահազանգ էր ստացել Գյումրիի բժիշկներից այն մասին, որ հանրապետական պատգամավոր Աշոտ Աղաբաբյանի գրասենյակի աշխատակից Յաշայի նախաձեռնությամբ ստիպողաբար հանրապետականացնում են այս քաղաքի բոլոր հիվանդանոցների տնօրեններին: Զավեշտալին այն էր, որ այդ նույն տնօրենները Շիրակի նախկին մարզպետ Ռոմիկ Մանուկյանի օրոք խմբովի դաշնակցականացվել էին կամ պաշտոն էին ստացել դաշնակցական դառնալու դիմաց: Սակայն բուժհիմնարկների պաշտոնյաները մեզ հետ զրույցում կտրականապես հերքեցին իրենց՝ հանրապետական դառնալու փաստը՝ նշելով, թե դաշնակցականներից ինչ խեր տեսան, որ հիմա էլ հանրապետականացվեն: Ուղիղ մեկ շաբաթ առաջ՝ վարչապետ Տիգրան Սարգսյանի Գյումրի կատարած այցի ժամանակ, լիովին հաստատվեցին մեր տեղեկությունները. Գյումրու Վարդան Աճեմյանի անվան դրամատիկական թատրոնի դահլիճի առաջին շարքերում որպես հանրապետականներ նստած էին մեր զրուցակիցները՝ Գյումրու մարզային հիվանդանոցի տնօրեն Սաթենիկ Բեբությանը, հոգեբուժարանի տնօրեն Նադեժդա Վարդանյանը եւ այլք: Վարչապետն էլ, ի դեպ, եկել էր իր կուսակիցների հետ խորհրդակցելու Հանրապետականի նախընտրական ծրագիրը կազմելու համար եւ նրանց հաճախակի էր դիմում՝ «Հարգելի ՀՀԿականներ» արտահայտությամբ:

Երեկ «Առավոտը» Շիրակի մարզպետարանի առողջապահության վարչության պետ Հովհաննես Հովհաննիսյանից հետաքրքրվեց, թե ինչո՞ւ էին հիվանդանոցների տնօրենները հրավիրվել Գյումրիում անցկացված ՀՀԿ-ի նիստին, արդյոք նրանք հանրապետականնե՞ր են դարձել, ինչպես որ կարծում է վարչապետը:

«Ոչ, ոչ բոլորն էին հանրապետականներ, մենք հայտնել էինք, որ վարչապետն է գալու, ով որ ցանկություն է հայտնել, եկել-մասնակցել է, օրինակ՝ այդտեղ թե «Բարգավաճ»-ից մարդիկ կային, թե դաշնակցականներ: Իմ շարքում Ավստրիական մանկական հիվանդանոցի տնօրենը՝ Կուրղինյան Աշոտն էր նստած, դուք գիտեք, որ նա դաշնակցական է, բայց ո՞վ է այսքան ժամանակ նրա հավին քշա ասել: Մի բուռ ազգ ենք, ով ինչ կուսակցության կուզի, թող հարի, եթե մարդը որոշել է հանրապետական կամ դաշնակցական դառնալ, ամոթ չէ՞ ինձ թույլ տամ եւ ասեմ՝ ինչո՞ւ ես դու դաշնակցական դարձել, իսկ դու՝ հանրապետական, թող դառնան, մենակ թե մեր երկրին, հայրենիքին վնաս չտան: Ես ազատամիտ մարդ եմ, ազատ եմ վերաբերվում այդ հարցին ու առհասարակ չեմ սիրում ճնշել ոչ մեկին, ես ինքս չեմ էլ սիրում, երբ ինձ են ճնշում: Անհարմար եմ զգում ու ինձ թույլ չեմ տա նման բան անել: Ես ինքս կուսակցական չեմ, վաղուց եմ եղել կուսակցական՝ կոմունիստների օրոք»,- պարզաբանեց առողջապահության վարչության պետը: Ըստ մեր զրուցակցի՝ մի բուռ ազգի համար այսքան կուսակցություններն աբսուրդ են: «Եթե ինձ հարցնեն, կասեմ, որ մեզ ոչ մի կուսակցություն պետք չէ, թող կորչեն բոլոր կուսակցությունները, ամենաճիշտը ազգային գաղափարախոսության շուրջ համախմբվելն է: Մենք Բելգիա կամ Գերմանիա չենք, ոչ էլ Մերձբալթյան երկրներ, Հայաստանը աշխարհաքաղաքական բարդ իրավիճակում է, մեզ համախմբվել է պետք»,- կարծում է վիրաբույժ, բժշկական գիտությունների թեկնածու Հովհաննես Հովհաննիսյանը:

ՆՈՒՆԵ ԱՐԵՎՇԱՏՅԱՆ

Ք a r a v o t d a i l y
ՇԱԲԱԹ 17.03.2012

Ղավախքը, ՀՀԿ-ն եւ ազգային խաբկանքը

Իմ ակնարկը նախընտրական է այնքանով, որքանով կապ ունի Ղավախքի հիմնահարցի հետ: Փոխարենը՝ այն բոլորովին կապ չունի ՀՀ-ում տեղի ունեցող նախընտրական գործընթացների հետ, ավելին՝ բնավ նպատակ չունենք փնովելու կամ պաշտպանելու այս կամ այն կազմակերպությանն ու քաղաքական ուժին: Խնդիրը Ղավախքն է՝ իր անցած պատմական փոքր, բայց վճռորոշ հատվածով: Ինչ տեղի ունեցավ Ղավախքի եւ, ընդհանրապես, Վրաստանի պարագայում, հաշվետու ժամանակաընթացքում:

Հաշվետու ժամանակահատվածը ոչինչ չտվեց մեզ՝ Վրաստանում բռնազավթած եկեղեցիների վերադարձի մասով: Վարչապետի կողմից իր պաշտոնավարման սկզբնամասում Սբ. Նորաշեն այցը, նախագահի առջեւ հարցի բարձրացումը չունեցավ ընթացք, ավելին, հայկական կողմի անգործության եւ հարցին շտիրապետելու արդյունքում վրացական կողմը «բալանսավորեց» հարցը՝ ներկայացնելով նույնպիսի պահանջներ, որով եւ հարցը վերջնականորեն անցավ պատմության գիրկը: Վրաստանը օրենսդրական փոփոխություններով հնարավորություն տվեց մեզ գրանցվելու որպես կրոնական կազմակերպություն, որով եւ տասնապատիկ բարձրացրեց իր միջազգային հեղինակությունը, սակայն օրենսդրական այս խաղը մեզ ոչինչ չտվեց: Վրաստանի իշխանությունները, մոլորակի երկրներից տարբերվելով, արգելեցին հայ ուսուցիչների վերապատրաստումը ՀՀ-ում, հայկական կողմը չկարողացավ ոչինչ անել: Վրացիները անխնայորեն վտարեցին դպրոցներից նվիրյալ ուսուցիչներին, հայկական կողմը չկարողացավ ոչինչ անել: Վրացիները կրճատեցին հայերենի դասաժամերը, հայկական կողմը չկարողացավ ոչինչ անել: Վրացիներն արգելեցին հայ գործիչների, պատգամավորի մուտքը Ղավախք, հայկական կողմը ոչինչ չկարողացավ անել: ՀՀԿ-ականներն անգամ մտահոգություն չհայտնեցին իրենց ցուցակով պատգամավոր դարձած, հետեւաբար՝ ավելի մոտ գործընկեր պատգամավորին հասցված վիրավորանքի կապակցությամբ, ինչը բազմիցս արեցին ընդդիմադիր պատգամավորները: Վրացիներն ակտիվացրեցին հալածանքներն ու ձերբակալությունները ջավախահայ գործիչների շրջանում, հայկական կողմը ոչինչ չկարողացավ անել: Վրացիները (ԱՄՆ-ը) կառուցեցին ճանապարհներ Ղավախքում, ավադ, ոչնչացվող հայկական գործոնն այստեղ չկարողացավ դիմակայել ահեղ թուրքադրբեջանականին, որը գրեթե շրջափակեց ՀՀ-ն, իսկ կործանարար ազդեցությունները դեռ առջեւում են: Հայկական կողմը չկարողացավ ոչինչ անել: Վրաստանը բացեց աշխարհի առաջ էներգետիկ դաշտը, ավադ, ողջ Ղավախքով մեկ լցվեցին թուրքական ընկերությունները, որոնք այժմ Ղավախքի գետերն ամբողջովին վերածել են շինհրապարակի: Հայկական կողմը չկարողացավ ոչինչ անել: Վրաստանը բացեց աշխարհի բիզնեսմենների առաջ իր երկիրը, հարյուր եւ մեկ հայկական ընկերություններ (այդ թվում՝ եւ ՀՀԿ-ից, եւ ծնունդով Ղավախքից մի շարք գործարարներ) Ղավախքի վրայով վայրէջք կատարեցին Բաթում, իսկ գործող իշխանությունը՝ ՀՀԿ-ն, ոչինչ չարեց, որպիսի վերջիններս իրենց ներդրումների գոնե չնչին տոկոսը ճանապարհին թողնեին Ղավախքում:

ՀՀ ՊԵԿ-ի որոշմամբ մեկ տարի առաջ Ղավախքի վարորդների համար ՀՀ-ում մնալու օրեր սահմանվեցին (յուրաքանչյուր մուտքի եւ տարվա կտրվածքով): Այս խայտառակ որոշման կայացնողներն անգամ հաշվի չառան այն վարորդներին, որոնք հնարավոր տնտեսական կամ տուրիստական ներդրումներով էին զբաղվում ՀՀ-ում: Ղավախքի կապը Մայր պետության հետ հերթական անգամ թուլացավ: Այստեղ կարող է պարոն վարչապետն արդարանալ, ինչպես նրա պաշտոնյա Ճ. Քոչարյանը, իբր, այլ պետության առանձին վարչամիավորների համար չենք կարող ընդունել առանձին որոշումներ: Իր պաշտոնավարման ողջ ընթացքում Տ. Սարգսյանն այդպես էլ չայցելեց Ղավախք: Այստեղ եւս Տ. Սարգսյանը կարող է արդարանալ՝ նշելով, որ այլ երկրի տարածք է, հրավեր է պետք: Միանգամից նշենք, որ Սահակաշվիլու վարչակարգը սկիզբ է առել ոչ թե 2007 կամ 2008թթ., այլ՝ 2003թ., իսկ ահա այդ ընթացքում Անդրանիկ Մարգարյանը ոչ թե մեկ անգամ, այլ՝ բազմիցս է եղել Ղավախքում: Նա էր, որ 2002թ. առաջին անգամ հարց բարձրացրեց Ղավախքում ՀՀ հյուպատոսության բացման մասին, նրա մոտ էին գալիս պարբերական այցերով եւ խորհրդատվություն, ինչու չէ՝ որոշ ցուցումներ ստանալու Սամցխե-Ղավախքի նահանգապետերը, նա էր, որ պատվում էր Ղավախքի ակտիվ երիտասարդներին (մի անգամ Վահագն Չախալյանը հոպարտությամբ ցույց տվեց մի ժամացույց՝ Ա. Մարգարյանինն է), նրա առաջ ոչ մի սահման փակ չէր**D**

Շարունակում են Վրաստանի բանտերում մնալ հարյուրավոր այն ՀՀ քաղաքացիները, որոնց անձնագրերում պատահաբար եղել է ռուս-աբխազական սահմանային անցակետի կնիք, հայկական կողմը չկարողացավ ազատել այդ անմեղ մարդկանց: Շարունակվում է ՀՀ ոստիկանության անձնագրերի եւ վիզաների վարչության կողմից ՀՀ քաղաքացիության անձնագրերի զանգվածային տրամադրումը ջավախահայությանը, որն ունի եւ դրական, եւ բացասական կողմեր:

Նախկին ընտրությունների ժամանակ Երեւանում կազմակերպվեցին ջավախահայության զանգվածային հավաքներ, անգամ բուք ու բորանին Ղավախքից բերվեցին հազարավոր մարդիկ (զարմանալի էր, որ մի քանի ուսուցչի ՀՀ արգելած վրացական հատուկ մարմիններն այս անգամ հանդուրժեցին հազարավոր սեփական քաղաքացիների մուտքն այլ պետություն՝ այն էլ այլ պետության կուսակցության նախընտրական հավաքին մասնակցելու համար), որոնց դեմքերից դժվար չէր գուշակել, որ վերջիններս անգամ տեղյակ չեն, թե ո՞ւր են գնում, ի՞նչ են գոռում հարթակում կանգնածները: Արեցին. ջավախահայերի միլիոնավոր դոլարներ հոսեց նախընտրական շտաբներ, ջավախահայությունը համախմբվեց ոչ թե գաղափարի, այլ՝ ինքն էլ չհասկացավ, թե ում կամ ինչի շուրջ: Վերջապես մենք՝ ջավախահայերս, երբ ենք ունենալու գաղափարական համախմբվածություն, էլի՞ ՀՀԿ-ին միանալ, հանո՞ւն...

ՎԱՀԵ ՍԱՐԳՍՅԱՆ

Ծեծել են բերման ենթարկված զինվորներին

Մարտի 14-ին ՀՀ ԶՈՒ Երեւանի կայազորի Ռազմական ոստիկանություն բերման էին ենթարկվել մի խումբ զինվորներ:

Նրանց «հրավիրել» էին դեռեւս մեկ ամիս առաջ զորամասերից մեկում տեղի ունեցած ծեծկոտուքի կապակցությամբ: Սակայն ռազմական ոստիկանությունում նրանց դաժան ծեծի են ենթարկել:

«Չենք լռելու» քաղաքացիական նախաձեռնության տեղեկություններով, այդ խուլիգանությանը անմիջական մասնակցություն են ունեցել Երեւանի կայազորի Ռազմական ոստիկանության պետ Ռ. Ներսիսյանը, քրեական հետախուզության բաժանմունքի պետ Հ. Ոփանյանը եւ քննչական բաժանմունքի հետաքննիչ Ա. Ավագյանը:

Աղբյուրի հավաստմամբ, զինվորներից առավել մեծ վնասվածքներ է ստացել (դեմքի շրջանում) Արսեն անունով սեւանցի մի երիտասարդ, որին «լռեցնելու» նպատակով, ծեծելուց հետո, տարել են զորամաս, արձակուրդ ձեւակերպել եւ պահանջելով որեւէ մեկին չպատմել կատարվածի մասին՝ տուն ուղարկել:

«Չենք լռելու» երիտասարդական նախաձեռնությունը դիմել էր բոլորին՝ նմանատիպ դեպքերի մասին chenqlrelu@gmail.com էլ. հասցեին հայտնելու խնդրանքով:

Պաշտպանության նախարարությունից «Առավոտին» փոխանցվեց, որ Ռազմական ոստիկանության պետի հրամանով նշանակվել է ծառայողական քննություն:

Ռ. Մ.

Միջպետական ճանապարհին երթեւեկությունը խափանվել էր

Մարտի 16-ի առավոտյան Հայաստան Վրաստան միջպետական մայրուղու Իջեւան-Նոյեմբերյան ճանապարհի Ոսկեպար-Կիրանց շրջանցիկ, բարձրադիր հատվածում երթեւեկությունը խափանվել էր: Թաց ձյան եւ սառած ճանապարհի պատճառով Նոյեմբերյան-Երեւան միկրոավտոբուսային երթուղու «Մերսեդեսը» չէր կարողանում առաջ շարժվել եւ սահեց, դուրս ընկավ ճանապարհից: Երթուղայինը ի վերջո Իջեւան հասավ նախատեսվածից մի ժամ ուշացումով: Ճանապարհի երթեւեկելի մասից սահել-դուրս էին ընկել շատ մարդատարներ, այդ թվում՝ Երեւանից Բագրատաշեն մեկնող մաքսակետի հերթապահի մեքենան: Վարորդները

ստիպված էին իրենց մեքենաների անվադողերին շղթաներ հագցնել: Ճանապարհից դուրս եկած մեքենաներին քարշելու համար Ոսկեպար գյուղից «Բելորուս» տրակտոր էր եկել:

Զմռան ամիսներին Կիրանց եւ Ոսկեպար գյուղերի տրակտորիստները այս կերպ փող են աշխատում: Այս ճանապարհի սպասարկումն իրականացնող Նոյեմբերյանի «Լեւոն երկրորդ» ՍՊԸ-ի բանվորները բեռնատարից ավազ եւ աղ էին շաղ տալիս: Ժամը 11-ի դրությամբ երթեւեկությունն այդ հատվածում քիչ թե շատ կարգավորվեց, թեեւ ճանապարհը շարունակում է վտանգավոր մնալ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Կալանավորների «Արգելված գոտին»

Այսուհետեւ լույս է տեսնելու Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության քրեակատարողական ծառայության «Արգելված գոտի» ամսագիրը:

Անդրանիկ համարն արդեն մեր ձեռքի տակ է: «Կարեւորելով դատապարտյալների արարքների եւ կենսակերպի, թե քրեակատարողական ծառայողների գործունեության մասին ճշգրիտ եւ ստուգված տեղեկատվության տրամադրումը, ակնկալում եմ նաեւ, որ շահագրգիռ ընթերցողներին հասցեագրված հրապարակումները կնպաստեն անկեղծ երկխոսության միջավայրի ձեւավորմանը»,- իր առաջաբան խոսքում գրել էր ՔԿՀ վարչության պետ, գեներալ-գնդապետ Հայկ Հարությունյանը:

«Արգելված գոտին» գունավոր է, ունի խորագրեր. «Ստեղծագործում են դատապարտյալները», «Աշխարհի բանտերը», «Մեր վետերանները», «Զարմանահրաշ պատմություններ»: Իսկ ամսագրի «Օպերատիվ» բաժնի լուրերը սկսվում են այսպես. «Կալանավորված կամ դատապարտված թմրասեր անձանց առաջարկում ենք լավ սերտել ՀՀ քրեական օրենսգրքի 266 հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը: Բացենք փակագծերը. թմրամիջոցների կամ հոգեներգործուն նյութերի ապօրինի շրջանառությունը ազատազրկման կամ կալանքի ձեւով պատիժը կրելու կամ կալանավորվածներին պահելու վայրերում պատժվում է 5-10 տարվա ազատազրկման»: «Եղեք առողջ» խորագրի ներքո տրված էին բժշկական խորհուրդներ՝ թոքերի հիվանդության, ատամնացավի, վերքի, աչքի, գլխացավի...մասին: Նկատենք, որ տարիներ առաջ արդարադատության նախարարությունը փորձ արեց «Նժար» պարբերաթերթով անդրադառնալ դատապարտյալների հոգսերին եւ թերթը, ֆինանսական դժվարությունների հետ կապված՝ փակվեց:

Ամսագիրը վաճառքի ենթակա չէ:

ՌՈՒԶԱՆ ՄԻՆԱՍՅԱՆ



«Ինձ փորձեցին վիրավորել, բայց հաճոյախոսություն ստացվեց»

ԿԳ փոխնախարար Մանուկ Մկրտչյանը՝ կրթական բարեփոխումների եւ իր մասին

ՀՀ ԿԳ նախարարի տեղակալ Մանուկ Մկրտչյանը մինչեւ 2009 թվականը Գնահատման եւ թեստավորման կենտրոնի (ԳԹԿ) տնօրենն էր, իսկ այժմ նույն կառույցի խորհրդի նախագահը: «Առավոտի» հետ զրույցում փոխնախարարը նշեց, որ չնայած ԳԹԿ-ն ենթակա է ոչ թե ԿԳ նախարարությանը, այլ կառավարությանը, սակայն ԳԹԿ զարգացման ծրագրերը եւ բոլոր փոփոխությունները կրթության ընդհանուր եւ հեռահար քաղաքականության շրջանակներում են: Պարոն Մկրտչյանն ասաց, որ ԳԹԿ-ի՝ դպրոցներում իրականացվող արտաքին գնահատումների միջոցով ցանկանում են աստիճանաբար հասնել ընդունելության քննությունների վերացմանը. «Այդ անցումը պետք է հեշտ լինի: Վարչապետն էլ է բազմիցս նշել, որ եթե երեխան ուզում է իր կրթությունն ինչոր տեղ շարունակել, պիտի խոչընդոտ չունենա, փոխարենը՝ բուհում սովորելու ընթացքը պետք է լինի պատասխանատու եւ դժվարություններ հաղթահարելով»:

Քանի որ մի քանի օր առաջ ՀՀԿ-ական ԿԳ նախարարը, նախագահի մտերիմ մարդկանցից «Բարեպաշտ սերունդ» հիմնադրամի նախագահ, գործարար Բարսեղ Բեգլարյանն ու փոխնախարարը այցելել էին թիվ 16 ավագ դպրոց, հետաքրքրվեցինք՝ արդյո՞ք դա ընտրությունների նախաշեմին կուսակցական քարոզչություն չի ընկալվի:

«Մենք պետք է կրթության ոլորտում արվող քայլերը քաղաքական խաղերից անկախ ընկալենք»,- պատասխանեց Մանուկ Մկրտչյանը: «Ավագ դպրոցների վրա պետք է լինի առանձնահատուկ ուշադրություն բոլոր առումներով եւ քայլերից մեկն այն է, որ բարերարներ ու հովանավորներ գտնենք, ավագ դպրոցները կցենք բուհերին եւ այլն: Կոնկրետ «Բարեպաշտ սերունդի» եւ 16 դպրոցի պայմանագիրը ոչ թե այսօր, այլ անցյալ տարի է կայացվել եւ լուրջ ծրագիր իրականացվել: Նախարարն էլ ի պաշտոնե այդ հիմնադրամի խորհրդի նախագահն է: «Բարեպաշտ սերունդ»-ի խորհրդի վերջին նիստին որոշվեց, որ երկուստեք այցելենք ու տեղում տեսնենք կատարված աշխատանքների ընթացքը, այնպես որ, այդ այցելությունը քարոզարշավի հետ կապ չունի: Եվ հետո «Բարեպաշտ սերունդը» միայն 16 դպրոցում չէ, որ ներդրումներ է կատարել»,- ասաց մեր զրուցակիցը:

Փոխնախարարից հետաքրքրվեցինք՝ կայացած եւ արդարացած համարո՞ւմ է ավագ դպրոցների դպրոցների ցանցի ստեղծումը, այնպես էլ 12-ամյա կրթության հարցը բազմիցս քննարկվել է. նախարարներ ու կադրեր են փոխվել, բայց հաջողվել է ծրագիրն իրականացնել, որը, նրա ձեւակերպմամբ՝ չի եղել մեկ պաշտոնյայի կամակատարություն:

Մեր զրույցի ժամանակ անդրադարձ եղավ Մանուկ Մկրտչյանի անունը մշտապես դասագրքային «խժդժությունների» հետ ասոցացվելուն: Փոխնախարարի խոսքով, պատճառն այն է, որ ինքը ի պաշտոնե պատասխանատու է հանրակրթության ոլորտի, հանրակրթական ծրագրերի իրականացման, նաեւ նախարարի հրամանով նախագահում է դասագրքերի մրցույթի հանձնաժողովը: Նա լուրջ չի համարում հանձնաժողովի անդամների կարծիքը վիճարկելը եւ կոչ է անում մարդկանց՝ վստահել միմյանց ու ստեղծել փոխըմբռնման մթնոլորտ: «Խոսքը միայն ինձ վստահելու մասին չէ: Ուղղակի հանձնաժողովը չի կարող հաշվի չառնել համապատասխան փորձագիտական խմբերի որոշումները, որոնք ընդամենը հաստատում ենք: Ոչ ոք բարոյական իրավունք չունի իրեն համարել ավելի բարի, ուժեղ եւ նվիրյալ, քան հանձնաժողովի անդամները: Ախր այնպես չէ, որ այնտեղ հավաքվել է համախոհների խումբ ու ինչ ուզում՝ անում է: Այդ հանձնաժողովի կազմում է, օրինակ, Աժ պատգամավոր Անահիտ Բախշյանը»:

Քննական առաջադրանքների շտեմարանների «մասով» էլ պարոն Մկրտչյանը հայտարարեց, որ հիմա պատրաստ են լսել ցանկացած բովանդակային առաջարկություն ու դիտողություն:

Մեր դիտարկմանը, թե ԳԹԿ-ում իր աշխատանքն ավելի ստեղծագործական էր, իսկ ԿԳ նախարարությունում զուտ վարչական, Մանուկ Մկրտչյանը չհամաձայնեց՝ ասելով. «Չեմ կարծում, թե ստեղծագործական կարողությունները կիրառություն չունեն վարչական աշխատանքում, բոլոր տեղերում եւ հարցերին էլ պետք է ստեղծագործաբար մոտենալ: Մեր աղագան նորարարական մոտեցման մեջ է, անգամ փոխնախարարը պարտավոր է նորարար լինել: Մի անգամ մեկն ուզում էր վիրավորել ինձ՝ անվանելով իդեալիստ, բայց ակամայից հաճոյախոսություն ստացվեց: Որովհետեւ անհնար է լինել ռեալիստ՝ չլինելով իդեալիստ, կա ուղղակի զուտ անջատված ռեալություն՝ իդեալական եւ իրական: Եվ եթե իդեալական իրողության մեջ դու չունես հեռուն գնացող պատկերացումներ, առա քո ռեալությունը ոչինչ չի արժենա: Ի դեպ, նորարարությունը չի պայմանավորվում աչք ծակող նորույթով, բավական է թեկուզ այն, որ կարողանաս գտնել սեփական տարբերակը»: Հավելենք, որ Մանուկ Մկրտչյանը արժանացել է ՀՀ բարձրագույն պարգեւներից, նաեւ ՌԴ «Հանրակրթության պատվավոր գործիչ», Ղազախստանի «Հանրակրթության պատվավոր գործիչ» մեդալների, ՌԴ Կրասնոյարսկի մարզի «Վաստակավոր ուսուցիչ» կոչման: Փոխնախարարն ասում է, որ այն էլ ուրիշ երկրներում՝ միայն իդեալիստ լինելու համար իրեն նման պարգեւների հաստատ չէին արժանացնի:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

«Կանչի աղյուծներն» ու մեր «ճնճղուկները»

Կամ՝ գովազդային հոլովակների որակը «դրսում» եւ Հայաստանում

Երեկ Հայ-ռուսական (Սլավոնական) համալսարանի մեծ դահլիճում կայացավ «Կանչի աղյուծներ» գովազդի միջազգային փառատոնի հաղթող տեսահոլովակների ցուցադրությունը: Մեզ մոտ նման ցուցադրություն անցկացվում է 2003 թվականից՝ Հայաստանի գովազդային խորհրդի (ՀԳԽ) նախաձեռնությամբ:

«Առավոտը» զրույցի հրավիրեց ՀԳԽ-ի նախագահ Արմեն Մարտիրոսյանին եւ խորհրդի անդամներից Խորեն Բեգլարյանին: Մեր զրուցակիցները նշեցին, որ Կանում 1951 թվականից անցկացվող ամենամյա նման հեղինակավոր փառատոնի երեւանյան ցուցադրությունը նպատակ ունի բարձրացնել հայրենական գովազդային ոլորտի մակարդակը՝ համեմատության մեջ դնելով աշխարհի լավագույն հոլովակները տեղականի հետ: Դիտարկմանը, թե դատելով հայաստանյան TV-ներով ցուցադրվող տեսահոլովակներից, փաստորեն կարելի է ենթադրել, որ Հայաստանում անցկացվող ամենամյա միջոցառումները չեն ծառայում իրենց նպատակին, Արմեն Մարտիրոսյանը հակադարձեց. «Ոչ, հայաստանյան գովազդային ոլորտում աճ է արձանագրվում որակական եւ քանակական առումով: Իհարկե, այսօր չենք կարող համեմատվել համաշխարհային գովազդի հետ»: Խորեն Բեգլարյանն էլ հավելեց, որ դրա համար կան որոշակի պատճառներ, օրինակ՝ մեզանում գովազդային հոլովակների պատրաստման գինը շատ ցածր է, հաճախ արտադրող ընկերությունը հնարավորություն չի ունենում դիմել բարձրակարգ մասնագետների՝ հնչյունային ռեժիսորի, օպերատորի, կոմպոզիտորի, դիմահարդարի եւ այլն: Փաստեց նաեւ, որ գովազդներում կրկնվում են դերասանների ձայները, ովքեր հիմնականում TV-ների կամ ռադիոյի աշխատակիցներ են:

Արմեն Մարտիրոսյանը (ձախից) եւ Խորեն Բեգլարյանը:

Նշելով բազմաթիվ օրինախախտումների մասին՝ Ա. Մարտիրոսյանը բերեց բանկային, ապահովագրական եւ այլ ոլորտների տեսահոլովակներում երեխաների նկարահանվելու չարաշահման օրինակներ՝ դա արգելված է օրենքով: Մեր խնդրանքին ի պատասխան՝ պարոն Մարտիրոսյանը մի դեպք ներկայացրեց. երգչուհի Ալլա Լեւոնյանի եւ իր անուշիկ երեխաների կողմից գովազդվող եգիպտացորենի ու կանաչ ոլոռի պահածոների հոլովակը, հավաստիացնելով, որ մանուկների մեծ մասի մոտ պարզապես կախվածություն է առաջացել հիշյալ պահածոների նկատմամբ:

Ոլորտում տեղ գտած հիմնական խնդիրներից մեկը մասնագետները համարեցին գրագողությունը, հավաստիացնելով, որ շատ հեռուստաընկերություններ վերցնում են արտասահմանյան եւ հենց հայրենական որոշ գովազդների գաղափարը ու հարմարեցնում իրենց պարանքին: Կամ ֆիլմերի ընթացքում հանկարծ առանց գովազդը ազդարարող «շպոիկի» ցուցադրվում է 3-5 վրկ-անոց գովազդ:

Հարցին, թե այս դեպքում ո՞ւր է «նայում» ՀՌԱՀ-ը, Արմեն Մարտիրոսյանը պատասխանեց. «Ոչ միայն ՀՌԱՀ-ը: Ես կավելացնեի այլ պատասխանատուների անուններ՝ Հակամենաշնորհային հանձնաժողով, քաղաքաքետարանների արտաքին գովազդի պատասխանատու բաժիններ, ի վերջո՝ դատախազությունը, որը պարտավոր է արձանագրել օրենքի ցանկացած խախտում»: ՀԳԽ նախագահը հայտարարեց, թե Հայաստանում այդ թեմայով խոսելու դեմ տաբու է դրված: Ոչ մի հեռուստաընկերություն չի խոսի եւ թույլ չի տա իր եթերից խոսել խախտումների մասին՝ գովազդատուներին կորցնելու վտանգն աչքի առաջ ունենալով:

Կեսկատակ-կեսլուրջ հետաքրքրությանը՝ փաստորեն Հայաստանի գովազդային խորհուրդը մինչ օրս երբեւէ չի՞ աղաղակել խախտումների մասին, մեր զրուցակիցները հավաստիացրին, որ իրենք դիմել են ՀՌԱՀ, Աժ, Տնտեսական մրցակցության հանձնաժողով, որոնցից ստացել են պատասխան՝ եթե արձագանքեն ՀԳԽ-ի դիմումներին, առա պիտի արգելվեն հայաստանյան գրեթե բոլոր գովազդները:

ՍԱՄՎԵԼ ԴԱՆԻԵԼՅԱՆ

Հայերենի համար saryan.am-ում առայժմ տեղ չկա

Facebook-յան «Մենք դեմ ենք օտարալեզու դպրոցների բացմանը» խմբի անդամներին զարմացրել էր այն փաստը, որ Մարտիրոս Սարյանի անվան տուն-թանգարանի http://www.saryan.am կայքում տեղեկատվությունը միայն անգլերեն եւ ռուսերեն է, ինչը օրենքի խախտում է:

Aravot.am-ը թանգարանի տնօրեն եւ անվանի նկարչի թոռնուհի Ռուզան Սարյանից հետաքրքրվեց՝ ո՞րն է դրա պատճառը: «Երբ կայքը բացվում էր, այնտեղ սխալ բան էր ընտրված: Մենք մեծ քանակությամբ նկարներ ունենք կայքում եւ դրանց տակ գրված են լեզուները՝ ռուսերեն եւ անգլերեն: Այսինքն՝ նկարը կրկնվում է ամեն լեզվի հետ: Որ պետք է նաեւ հայերենը լիներ եւ անպայման պետք է լինի, խոսք չկա, դա նույնիսկ քննարկելու բան չէ, ուղղակի հիմա մեր կայքն այնքան ծանր է, որ այն պետք է փոխել սկզբունքայնորեն: Չենք հասցրել դա ժամանակին անել եւ հիմա աշխատում ենք այդ պրոբլեմի վրա»,- մեկնաբանեց թանգարանի տնօրենը:

ԳՈՀԱՐ ՀԱԿՈԲՅԱՆ

VIVA cell MTS

ԷՋԻ ԳՈՐԾԸՆԿԵՐՆ Է

Մարզված բռունցքը նաեւ սառը զենք է

Ռուսաստանի պետդումայում պատրաստվում են խստացնել մենաղայքարային մարտարվեստների ներկայացուցիչների համար քրեական պատասխանատվությունը:

Անցած տարի սամբոյի աշխարհի չեմպիոն Ռասուլ Միրզոեւի գործը անսպասելի շարունակություն է ստանում: Մարզիկը դատապարտվել է այն բանի համար, որ վիճաբանության ժամանակ հարվածել է 19-ամյա ուսանող Իվան Ագաֆոնովին, ինչը վերջինի մահվան պատճառ է դարձել: Այս պատմությունը մեծ արձագանք է ստացել եւ ՌԼԴԿ պատգամավորական խմբակցությունը համապատասխան օրինագիծ է մշակում: Նրանց տեսանկյունով մարդու՝ հատուկ նախապատրաստություն անցած բռունցքներն ըստ էության սառը զենք են: Այսինքն, եթե շարագործը հանցագործություն կատարելիս գործի է դնում մարզական մենաղայքարային ձեւերում յուրացրած հնարքները, վճիռ կայացնելիս դատարանը դա պետք է գնահատի որպես ծանրացուցիչ հանգամանք:

Ճիշտ է, օրինագիծը դեռ քննարկման փուլում է, սակայն դրա շուրջ արդեն թեժ քննարկումներ են ծավալվել:

Թերահավատները ասում են. եթե մարդը եկել է մարզադահլիճ, մեկ շաբաթ պարապել եւ դրսում ինչ-որ մեկի հետ կռվել, դա ծանրացուցի՞չ հանգամանք է: Այստեղ վիճելի հարցերը շատ են: Իսկ Պետդումայի սպորտի հանձնաժողովի նախագահի տեղակալ Դմիտրի Սվիշչեւի կարծիքով՝ հարցը հասունացել է: «Այլ բան է, որ անհրաժեշտ է ամեն մի նրբություն մանրամասն հաշվի առնել: Օրինակ, ո՞ր մարտարվեստների մասին է խոսքը, օրենքը կվերաբերի՞ սուսերամարտիկին, որը ոչ միայն կատարյալ տիրապետում է սուսերին, այլեւ, ասենք, պատառաքաղին: Իսկ ինչպե՞ս վարվել ինքնապաշտպանության հետ: Գուցե մարզիկը պաշտպանել է աղջկա՞: Նա խուլիգաններին ցրելուց առաջ պետք է վկայակա՞ն ունենա, որ ինքը բռնցքամարտիկ է: Ամեն դեպքում՝ օրենքը պետք է նպաստի երկրում սպորտի զարգացմանը: Որպեսզի ծնողները մի կողմից չվախենան իրենց երեխաներին մարզական խմբակներ ուղարկել, մյուս կողմից էլ՝ վախենան բակ թողնել»,- ասում է պատգամավորը:

Այսպես, թե այնպես՝ Ռուսաստանում ինչ-որ մի օրենք կընդունվի: Բայց դրա կարիքը, կարծում ենք, մեզանում ավելի շատ է: Առավել եւս, որ մի բուռ Հայաստանում անհայտ ծագման մի քանի տասնյակ արեւելյան ու չգիտես՝ էլ ինչ մարտարվեստների մի քանի տասնյակ «դպրոցներ» են գրանցված ու հայտնի չէ, թե դրանցում ի՞նչ են սովորեցնում երեխաներին եւ ինչ ներարկում նրանց հոգեբանության մեջ: Բարեբախտաբար, օրինական դաշտում գործող մեր մարզիկներն առայժմ, կարծես, առօրյա կյանքում խնդիրներ գրեթե չեն առաջացնում: Բայց հարցն ավելի շատ վերաբերում է մարզական կարիերան ավարտածներին, որոնցից շատերն աշխատանք են գտնում թիկնազորերում ու մասնակցում այս կամ այն «դեմքերի» ռազբիրատներին, հաճախ էլ՝ բոսին անսահման նվիրվածությունը ցույց տալու համար անձնական նախաձեռնություն դրսեւորում՝ անցնելով սահմանները:

Իսկը ժամանակն է, որպեսզի մեր նոր ընտրվելիք Ազգային ժողովում էլ այս խնդիրն օրակարգային առաջնահերթ հարց դառնա:

Ա. ՀԱԿՈԲՅԱՆ

Գոռ Վարդանյանի «Ճակատագիր» ֆիլմից ԱՄՆ-ում կաթված են ստացել

Դերասան, ռեժիսոր եւ պրոդյուսեր Գոռ Վարդանյանի՝ 2005թ.-ին նկարահանած «Ճակատագիր» գեղարվեստական ֆիլմը կցուցադրվի վաղը՝ Հանրային հեռուստատեսության եթերում: Ղարաբաղի մասին պատմող այս ֆիլմը դեռեւս 2007թ.-ին մասնակցել է ԱՄՆ-ում անցկացվող «Մեթոդֆեստ» կինոփառատոնին եւ հաղթող ճանաչվել «Հանդիսատեսի համակրանք» անվանակարգում: Ինչպես այսօր լրագրողների հետ հանդիպմանը նշեց իր բոլոր ֆիլմերի գլխավոր հերոս Գոռ Վարդանյանը՝ «Մենք նպատակադրվել ենք ոչ թե գումար աշխատել, այլ եկող սերնդի մեջ սերմանել հայրենասիրություն: Այդ կերպ մեր երեխաներն էլ ավելի կսիրեն մեր երկիրը եւ սիրով կգնան զինծառայության»:

300 հոգանոց դերասանական կազմով, 3 մլն 800.000 դրամ բյուջեով ֆիլմում օգտագործված է ծանր զրահատեխնիկա. նկարահանման ընթացքում կրակվել է 15.000 փամփուշտ:

Բեմադրող ռեժիսոր Վահե Խաչատրյանի խոսքով՝ մեծ էր ամերիկացիների հետաքրքրությունը ֆիլմի հանդեպ. «Հարցնում էին, թե որոնք են Ղարաբաղյան պատերազմի պատճառները: Այդպես հասկացանք, որ մեզ սատար կանգնողներ կան»: Ինչպես հայտնի է, «Ճակատագիրը» չի արժանացել Ազգային կինոյի «Հայակ» մրցանակաբաշխության ժյուրիի հավանությանը: «Ինձ համար դա անհասկանալի էր եւ զարմանալի, ու ես պարզապես արհամարհում եմ այդ վերաբերմունքը»,- ասաց Գոռ Վարդանյանը, իսկ Վահե Խաչատրյանը հավելեց, որ ֆիլմը հանդիսատեսի համար է. «Վերջիվերջո, պատերազմին կարելի է մասնակցել թե գաղափարապես եւ թե ֆիզիկապես: Հայկական կինոն ներկայումս միջին մակարդակի վրա է եւ «շեդեւրներ» չի ստեղծում»: Բանախոսները տեղեկացրին, որ ԱՄՆ-ում «Ճակատագիրը» հանդիսատեսին ստիպել է արցունքն աչքերին դիտել. «Մեթոդֆեստ» մրցույթի ժամանակ մեկին ինֆարկտ էր խփել, եւ շտապօգնությունը տարավ նրան»,- ասաց Գ. Վարդանյանը:

ԼՈՒԻԶԱ ՍՈՒՔԻԱՍՅԱՆ

ԺԱՄԱՆՑ

Սեռական կյանքի այբուբենը

Սեռական կյանքը պահանջում է հիգիենիկ նորմերի կատարում

«Խորհուրդ տալ, թե ե՞րբ է հարկավոր սկսել ապրել սեռական կյանքով՝ դժվար է, դա կախված է սեռական դաստիարակության առանձնահատկություններից, ընդհանուր զարգացումից, սեռական հասունության ձեւավորումից, տվյալ հասարակության մեջ գործող ավանդույթներից, տիրող բարոյահոգեբանական մթնոլորտից, ինչպես նաեւ շատ ու շատ այլ գործոններից»,- ասում է սեքսապաթոլոգ Վրեժ Շահրամանյանը:

«Այնուամենայնիվ, թե՛ տղայի, թե՛ աղջկա համար սեռական կյանքի սկիզբը ցանկալի է լինի 18 տարեկանից հետո, քանի որ լրիվ սեռական հասունացումը տեղի է ունենում այդ տարիքում, ավարտվում է մարդու ընդհանուր մտավոր եւ հոգեբանական ձեւավորումը, այլ կերպ ասած՝ մարդն այդ տարիքում ի վիճակի է պատասխան տալ սեփական արարքների համար»,- բացատրում է բժիշկը՝ հավելելով, որ սեռական կյանքը մարդու կյանքի, վարքագծի, վերջապես օրգանիզմի կենսագործունեության բաղկացուցիչ մասն է միայն, եւ այն ի զորու է ազդել մարդու ապրելակերպի եւ սեռական վարքագծի վրա:

«Առաջին սեռական հարաբերությունը աղջկա կյանքում հսկայական իրադարձություն է, եւ շատ հաճախ դրանից է կախված կնոջ հետագա սեռական վարքագիծը: Եթե առաջին սեռական հարաբերությունը տեղի է ունեցել կոպիտ ուժի կիրառմամբ, ուղեկցվում է ցավով, ապա հետագայում կարող է ձեւավորվել սեքսոլոգիական մի խանգարում, որը կոչվում է վագինիզմ՝ հեշտոցամուտքի մկանների կտրուկ սպազմ, որն ուղեկցվում է ուժեղ ցավով՝ փաստորեն անհնարին դարձնելով սեռական հարաբերությունը: Կինը, որը հասնում է սեռական հասունացման, այսպես կոչված՝ արբունքի, ունի բնական նորմալ ձգտում դեպի հակառակ սեռը: Այն ցանկալի է, որպեսզի արտահայտվի եւ բավարարում ստանա ամուսնական կամ գոնե մշտական մեկ զուգընկերոջ հետ ձեւավորված հարաբերություններում»,- նշեց Վ. Շահրամանյանը՝ հավելելով, որ մեկից ավելի զուգընկեր ունենալու դեպքում թե՛ կինը, թե՛ տղամարդը գտնվում են ռիսկային գոտում՝ կապված սեռավարակների, սեռական օրգանների բորբոքումների առաջացման հետ:

Բժշկի մեկնաբանմամբ՝ շատ հաճախ երիտասարդները չգիտեն, որ սեռական կյանքը պահանջում է որոշակի հիգիենիկ նորմերի կատարում: Անկախ այն հանգամանքից՝ սեռական կյանքով ապրում է թե ոչ, յուրաքանչյուր անձ՝ լինի կին, թե տղամարդ, պարտավոր է հետեւել իր սեռական օրգանների հիգիենային՝ դրանք անհրաժեշտ է լվանալ գոլ ջրով ամեն օր, ինչպես նաեւ սեռական ակտից առաջ եւ հետո: Սեռական օրգաններին չի կարելի ձեռք տալ կեղտոտ ձեռքերով, ինչպես նաեւ հարկավոր է ուշադրություն դարձնել այն տեղին, որտեղ պատրաստվում եք հարաբերություն ունենալ, խոսքը բաղնիքների, սաունաների, փակ լողավազանների մասին է. «Հաշվի առեք, որ նման տեղերում միշտ չէ, որ տրամադրվում է մաքուր սպիտակեղեն, ոչ միշտ են մաքրվում լողավազանները: Եթե օգտվում եք նման հաստատություններից, ապա խնդրեք նախօրոք լավ մաքրել լողավազանը, ձեռքի տակ ունեցեք մաքուր, անձնական օգտագործման սպիտակեղեն եւ աշխատեք հարաբերություն չունենալ ջրի մեջ, քանի որ նման դեպքում սեռավարակները թափանցելու ավելի մեծ հնարավորություն են ձեռք բերում: Սեռական կյանքի հիգիենայի հասկացությունն իր մեջ ընդգրկում է նաեւ ժամանակին բժշկի հաճախելը՝ սեռական օրգանների օրգանական եւ ֆունկցիոնալ խնդիրների դեպքում: Շատ հաճախ մարդիկ միամտորեն կարծում են, որ միայն հիգիենայի կանոններին հետեւելն ու միայն մեկ զուգընկեր ունենալն ապահովում է լիարժեք սեռական առողջություն: Իհարկե՝ նման վարքագիծը ձեզ ապահովագրում է մի շարք խնդիրներից, այնուամենայնիվ, առողջական բոլոր խնդիրները չեն, որ անմիջական կապ ունեն հիգիենայի եւ սեռական վարքագծի հետ»,- ավելացրեց բժիշկը՝ շեշտելով, որ յուրաքանչյուր սեռահասուն տարիքի անձ պարտավոր է տարին գոնե մեկ անգամ հաճախել բժշկի՝ «պայծառ եւ արեւշող» սեռական առողջություն ունենալու նպատակով:

Ե. Հ.